ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 11 ապրիլի 2018թ

2018թվականի ապրիլի 11-ին, ժամը 15:30-ին Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Բյուրեղավան համայնքի 2018 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին» թեմայով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, հրավիրված անձինք՝ համայնքի ղեկավարի տեղակալ Միշա Եղիազարյանը, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը և Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Ջարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. Բյուրեղավան համայնքի 2018 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի որոշման նախագծի քննարկում:

Լ.Պողոսյանը ներկայացրեց Բյուրեղավան համայնքի 2018 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքը: Գույքահարկի գծով թերակատարումը կազմել է 213.1 հազ. դրամ: Համայնքում հույքահարկի և հողի հարկի հավաքագրումները դժվարացել են, քանի որ համայնքի վարչական տարածքի խոշոր երկու հարկատուները՝ «Գլաս Ռուրլդ Քամփնի» ՓԲԸ-ն և «Այմաքար» ՍՊԸ-ն սնանկ են ճանաչվել: Մեկ տարվա կտրվածքով այս երկու ընկերությունների գույքահարկի և հողի հարկի պարտավորությունները կազմում են 6663.698ՀՀ դրամ:

Առաջին եռամսյակի դրությամբ հողի հարկի գծով վճարումներ կատարվել են 120.6 % -ով, տեղական տուրքերը կատարվել են 103.1 % -ով: Թերակատարվել է վարձակալական հողերի վարձավճարների մասը. հատկապես դժվար է Ջրաբեր բնակավայրի հանքավայրերի հողերի վարձակալության հարցը:

Ներկաները առաջարկեցին միջոցներ ձեռնարկել տեղական տուրքերի, վճարների, հողի հարկի և գույքահարկի գծով խոշոր պարտավորություններ ունեցող անձանց՝ հարկային պարտավորություններ կատարելու ուղղությամբ: Լ. Պողոսյանը տեղեկացրեց, որ 100 000 դրամը գերազանցող հարկային պարտավորություն ունեցողների նկատմամբ սահմանվում են վարչական վարույթներ, որոնք շարունակական բնույթ են կրելու:

Քննարկումից հետո որոշվեց՝

հավանություն տալ Բյուրեղավան համայնքի 2018 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան